ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2010, 63, №2, 76-77



# ԳՐԻԳՈՐ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՓԻՋՅԱՆ
## (ծննդյան 90-ամյակին)



2009թ. լրացավ ճանաչված երկրաբան-երկրաքիմիկոս, Հայաստանի Պետական մրցանակի դափնեկիր, գիտության վաստակավոր գործիչ, երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Հովհաննեսի Փիջյանի ծննդյան 90-ամյակը:

Գ. Փիջյանը ծնվել է 1919թ. սեպտեմբերի 1-ին, Թբիլիսիում, վախճանվել է 1998 թ.-ին, Գերմանիայում:

1937թ-ին ընդունվել է Երևանի պետական համալսարանի Երկրաբանական ֆակուլտետը, ուր սովորել է մինչև 1941թ. մայիսը և նույն թվին զորակոչվել Սովետական բանակ: 1942թ. ավարտել է Թելավիի զինվորական ուսումնարանը և մեկնել ռազմաճակատ: Մասնակցել է Կովկասի պաշտպանության, Կուրսկ-Բելգորոդի, Ուկրաինայի ազատագրման, Դնեպրի գետանցման համար մղվող ճակատամարտերին, մի քանի անգամ վիրավորվել է: Մարտական սխրանքների համար պարգևատրվել է մի շարք շքանշաններով ու մեդալներով:

1946թ. զորացրվել է և շարունակել ուսումը ԵՊՀ Երկրաբանական ֆակուլտետում, ավարտել այն 1947 թ. ու անցել աշխատանքի ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող:

Սկսած 1949թ. Գ. Փիջյանը զբաղվել է Հայաստանի մի շարք՝ Նոյեմբերյանի, Սևանի, Հրազդանի, Կապանի, Մեղրու շրջանների հանքավայրերի հետազոտությամբ, միաժամանակ հեռակա անցել է ասպիրանտական ուսուցում օգտակար հանածոների հանքավայրեր մասնագիտությամբ Լենինգրադի Լեռնային ինստիտուտում: 1951թ. նույն ինստիտուտում հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը „Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի հանքային դաշտի երկրաբանությունը" թեմայով:

1953-1955թթ. Գ. Փիջյանը համատեղությամբ դասավանդել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի Լեռնային ֆակուլտետում:

1959թ. Գ. Փիջյանը նշանակվում է Հայաստանի ԳԱ ԵԳԻ-ի նորաստեղծ Հազվագյուտ և ցրված տարրերի բաժնի վարիչ և այդ պաշտոնը վարել է մինչև 1988թ.: Նույն տարում նա ընտանիքով տեղափոխվում է մշտական բնակության Գերմանիա:

Գ. Փիջյանի գիտական ղեկավարությամբ և օգնությամբ բաժնում աճել և կայացել են երիտասարդ գիտնականներ՝ գիտության թեկնա-

ծուներ և դոկտորներ: Այդ տարիներին Գ. Փիջյանի ուսումնասիրությունների կենտրոնում եղել է պղինձ-մոլիբդենային հանքավայրերի մանրակրկիտ հետազոտումը՝ նրանց երկրաբանությունը, կառուցվածքը, միներալոգիան, երկրաքիմիան: 1975թ. նրա հեղինակությամբ լույս է տեսնում „Հայաստանի պղինձ-մոլիբդենային հանքավայրերի ֆորմացիան" ծավալուն մենագրությունը, որը մինչ տպագրվելը, 1970թ. Լենինգրադի Լենինային ինստիտուտում պաշտպանվել էր որպես դոկտորական ատենախոսություն:

1972թ. ակադեմիկոս Հ. Մաղաքյանի և Գ. Փիջյանի ղեկավարությամբ լույս է տեսնում „Հազվագյուտ և ազնիվ տարրերը Հայկական ԽՍՀ հանքային ֆորմացիաներում" կոլեկտիվ մենագրությունը, որը 1976թ. արժանացավ գիտության գծով Հայաստանի Պետական մրցանակի:

Գ. Փիջյանը հեղինակ և համահեղինակ է ավելի քան 100 գիտական հոդվածների, 5 մենագրությունների, մի շարք գիտական հաշվետվությունների և զեկուցագրերի:

Այդ աշխատություններից կարևորվում են "Հայկական ՍՍՀ երկրաբանությունը" բազմահատորի VI հատորը՝ "Մետաղային օգտակար հանածոներ" (1967), "Հայկական ՍՍՀ Արփա գետի ավազանի երկրաբանական կառուցվածքը և հանքաբերությունը" (1978), "Հայկական ԽՍՀ հանքային ֆորմացիաների միներալները" 2 հատորով (1984, 1986):

Գ. Փիջյանը բարեխիղճ և արդյունավետ աշխատանքի համար բազմիցս արժանացել է Հայաստանի Գերագույն Խորհրդի, Կառավարության և ԳԱ Նախագահության պարգևների և խրախուսանքների: Նրան շնորհվել է "Վաստակավոր երկրաբան" կոչումը: Գ. Փիջյանը գիտական աշխատանքը հաջողությամբ համատեղում էր մանկավարժական և հասարակական գործունեության հետ: Նա հանքավայրերի ծագման Միջազգային ասոցիացիայի (IAGOD) Կովկասյան սեկցիայի ղեկավարն էր, մի շարք գիտական խորհուրդների, ինչպես նաև պատերազմի վետերանների և այլ հասարակական կազմակերպությունների անդամ:

Գ. Փիջյանը մեծ հեղինակություն էր վայելում երկրաբանների և իրեն ճանաչողների շրջապատում: Նրա համեստ, աշխատասեր, բարի մարդու և ազնիվ քաղաքացու կերպարը միշտ վառ կմնա գործընկերների և աշակերտների հիշողության մեջ:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական
գիտությունների ինստիտուտ,
ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր «Գիտություններ
Երկրի մասին» հանդեսի խմբագրություն